ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԹԵՄԱՅՈՎ
(ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված նստաշրջան)

Արցախյան պատերազմն իր արտացոլումը գտավ Արցախում կռվող գրողների, հրապարակախոսների՝ շատ հաճախ արկերի պայթյունների տակ ծնված գործերում: Հեղինակները փաստավավերագրական շարադրանքի հետ Արցախի ազատության տեսիլը հանձնեցին թղթին: Շատերը Արցախյան պատերազմին անդրադարձան հետագայում՝ գեղագիտորեն ընկալելով և իմաստավորելով դեռևս չվերջակետված պատերազմի ողբերգական ու հերոսական էջերը:

Գրաքննադատությունն այսօր Արցախյան պատերազմին նվիրված ոչ բոլոր գործերին է անդրադարձել: Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների շարքում զորեղ է մասնավորապես հոգեբանական գործոնը, որը թույլ չի տալիս վերացարկվել իրականությունից ու ապրածդ ժամանակաշրջանի գեղարվեստական դիտարկումը կատարել:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Հայաստանի գրողների միության կողմից կազմակերպված գիտական նստաշրջանը՝ «Արցախյան շարժման արտացոլումը հայ գրականության մեջ», միտում ուներ փոքր-ինչ լրացնելու բացը, նաև խթան հանդիսանալու գեղարվեստական նոր գործերի ստեղծման համար: ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված նստաշրջանն անցկացվեց Գրականության ինստիտուտում 2016 թ. հոկտեմբերի 3-ին:

Բացման խոսքով հանդես եկավ Գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրության դոկտոր, Արցախյան պատերազմի մասնակից Վ. Դևրիկյանը, *ով շնորհավորեց ներկաներին Անկախության 25-ամյակի առթիվ՝ նշելով, որ բազում դժվարություններ հաղթահարելով ենք հասել այս օրվան: Նա շեշտեց, որ գիտաժողովի շրջանակում անհնար է ներկայացնել Արցախյան պատերազմին նվիրված ողջ գրականությունը: Քննությունը պետք է կատարել երեք ուղղությամբ՝ ըստ ժանրերի, թեմաների և հեղինակների: Հրապարակախոսությունը ծնվում է իրադարձությունների հետ, գեղարվեստական գրականության համար ժամանակ է պետք: Անցած 25 տարիները բավական էին, որ ընդհանրացվեր և բյուրեղացման արդյունքում առաջին պլան մղվեր գեղարվեստը: 2016 թ. ապրիլյան դեպքերն էլ բեկումնային ազդեցություն ունեցան մարդկանց հոգեբանության վրա:*

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ու շնորհավորեց ՀՀ - ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յ. Սուվարյանը*: Նա անդրադարձավ Ղարաբաղյան շարժման փուլերին, նշեց, որ շարժումն սկսվել է 1920-ական թվականներին՝ երբեմն-երբեմն ունենալով երևացող բռնկումներ: Այդպիսին էին 1960-ական թվականները, երբ Բագրատ Ուլուբաբյանի և նրա համախոհների ջանքերով հավաքվել էր հարյուր հազարից ավելի ստորագրություն՝ պահանջով, որ Արցախը միացվի Հայաստանի Հանրապետությանը: Դրան հաջորդել էին հալածանքները, սակայն շարժումը գլխատել չէր հաջողվել, որովհետև կար նաև Արցախի ժողովրդի հզոր կամքը: Յ. Սուվարյանը հպարտությամբ արձանագրեց, որ ողջ շարժման ընթացքում ունեցել ենք շատ լուրջ հաղթանակներ, ունեցել ենք հերոսներ, որոնք, գրականության մեջ կերպար դառնալով, նոր սերնդին պիտի օրինակ ծառայեն, ոգևորեն: Նա հաջողություն մաղթեց գիտաժողովին՝ ակնկալելով, որ այն ազդակ կդառնա գեղարվեստի մարդկանց համար՝ ստեղծելու մեծարժեք նոր գործեր:*

Ակադեմիկոս Ս. Սարինյանն *իր խոսքում ընդգծեց, որ Արցախյան շարժումն իր մեջ պարունակում է և՛ պատմափիլիսոփայություն, և՛ հոգեբանություն, և՛ աշխարհաքաղաքական ըմբռնում: Համակողմանիորեն ուսումնասիրելու տեսակետից բացառիկ դեր է հատկացված գրականությանը, որովհետև այն ընդունակ է իր մեջ ներառելու շատ հարցադրումներ:*

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԳՄ նախագահ Էդ. Միլիտոնյանը*: Նա նշեց, որ թեման ծանր է և խորապես չի բացվել: Շերտեր կան, որոնք մնացել են քննախոսությունից դուրս: Արժանավոր անուններ կան, որոնց գրականագիտությունը չի անդրադարձել: Մինչդեռ կյանքի ու մահվան սահմանագծում ստեղծվել են կրքոտ, բորբոքուն էսսեներ, որոնք ժամանակի մեջ ունեին պայթուցիկ նշանակություն: Հետաքրքիր էր Էդ. Միլիտոնյանի առաջ քաշած հարցադրումը. ինչո՞ւ գրողների մի մասը մասնակցեց գրական այդ ընթացքին, մյուս մասը՝ ոչ: Լավի կամ վատի խնդիր չի դրվում, այլ պարզապես կարևոր է այն գրողի գիրը, որը անդրադառնում է այդ թեմային: Ովքեր գրում էին, պատմական ճակատագրի ամբողջ բեռն իրենց վրա ընդունեցին:*

Ողջունելով գիտաժողովը՝ բ. գ. դ. Ավ. Իսահակյանը *զարգացրեց այն միտքը, որ մեր մեծերն են հասունացրել Արցախյան ազատագրական շարժումը, որը ամբողջ Հայաստանի ազատագրության պայքարն է: Ժամանակին Ավետիք Իսահակյանը Շուշիի կոտորածի մասին գրեց ցնցող տողեր: Նա զգեց այն կայծերը, որ հրդեհ դարձան: Հետո գրեցին Ս. Խանզադյանը, Ս. Կապուտիկյանը և ուրիշներ: Արցախյան շարժմանը նվիրեց իր գործունեությունը Զորի Բալայանը: Իրենց մեծ ներդրումն ունեցան Վ. Հակոբյանը և մյուսները:*

Ընդհանրացնող բնույթ էր կրում բ. գ. թ. Պ. Դեմիրճյանի *զեկուցումը՝ «Արցախյան հարցի արտացոլումը գրականության մեջ» թեմայով: Զեկուցման մեջ արծարծվեց այն միտքը, որ ռազմահայրենասիրական թեմատիկան շարունակում է արդիական մնալ զանազան ժանրերով գրող տարբեր սերունդների հեղինակների համար: Բացի Արցախյան պատերազմի բովով անցած, պատերազմի լույսն ու մութը տեսած հեղինակներից, արդեն լսվում է նաև 1990-ականների սկզբների ճակատագրական տարիներն իրենց մանկապատանեկան աչքերի և ընկալումների մեջ արտացոլած սերնդի ձայնը:*

Բ. գ. թ. Ս. Աբրահամյանի *զեկուցումը՝ «Ա. Հարությունյանի «Արցախում կռվող ջոկատի գրառումները» շարքը» թեմայով, անդրադարձ էր Արցախյան գոյամարտի նորօրյա ըմբռնումներին: Հարցադրումներն ու ընկալումները, որոնք կային արդի հայ պոեզիայում, Ա. Հարությունյանի պոեզիայում նոր են և տարբեր: Նրա պոեզիայում Արցախի գոյամարտը, ժամանակակից աշխարհը, ժողովրդի պատմական կենսափորձի ըմբռնումը միաձուլված են, մեծարժեք. դա հետաքրքիր է ուսումնասիրելու տեսանկյունից ու կարևոր արդի հայ պոեզիան ըմբռնելու առումով:*

«Պատերազմի առօրյայի գեղարվեստականացումը Սլավի-Ավիկ Հարությունյանի պոեզիայում» վերնագրով զեկուցումը կարդաց բ. գ. թ. Ն. Բալայանը*: Բանախոսն անդրադարձավ Արցախյան հերոսամարտին մասնակցած բանաստեղծի պոեզիայի կառուցվածքային առանձնահատկություններին, առօրյան գեղարվեստորեն ներկայացնելու յուրօրինակ ձևերին, գրողի մտածողության ուրույն դրսևորումներին, տեքստի հետ աշխատելու սիրած կիրարկումներին: Զեկուցողը բանաձևեց գրողի հավատամքը՝ արյան կանչով հողին կապված լինելու մշտնջենական կերպը:*

Բ. գ. թ. Ա. Ավանեսյանը *«Արցախյան հերոսամարտի պատկերումը Վ. Իսրայելյանի արձակում» թեմայով զեկուցման մեջ վեր հանեց արձակագրի՝ պատերազմի վերաբերյալ ձևավորված հայեցակարգերն ու խնդրադրումները: Զեկուցողն անդրադարձավ Իսրայելյանի պատումին բնորոշ հակասական, անգամ իրարամերժ գաղափարների ներդաշնակ համակեցությանը:*

Բ. գ. թ. Ա. Նիկողոսյանը *հանդես եկավ «Ուրիշ պատերազմը՝ Հ. Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպը» խորագրով զեկուցմամբ: Բանախոսը նախ կանգ առավ ընթերցողական, բանավոր ու էլեկտրոնային մակարդակում, գրականագիտական-տեսաբանական ընդհանրացումներում պարբերաբար հանդիպած և դեռ շարունակվող մեղադրական մտքին, թե՝ Արցախյան պատերազմը ինչպես հարկն է չի արտացոլվել ժամանակակից հայ գրականության մեջ, ապա քննության ենթարկեց Հ. Սարիբեկյանի վեպը:*

Բ. գ. թ. Ս. Ավետիսյանը *«Թշնամու կերպավորումը Արցախյան գոյամարտի պատումներում»* վերնագրով զեկուցման մեջ քննեց արդի հայ արձակում Արցախյան պատերազմի թեմաներով գրված այն գործերը, որոնք ոչ միայն պատկերագրում են պատերազմն ու նրա բոլոր դեմքերը, այլև ունեն հակառակորդի կամ թշնամու կերպավորման որոշակի գաղափարագեղագիտական համակարգ: Զեկուցողն ընդգծեց, որ գեղագրման կերպով առանձնահատուկ են այն պատումները, որոնք թշնամու ընկալման բազմաշերտ հայեցակարգ ունեն, այսինքն՝ կերպարն ունի թե՛ խորհրդանշական, թե՛ առարկայական դրսևորում, ինչպես նաև էթնիկական պատկանելությունը միօրինակ չէ, այլ ունի տարբեր ինքնություններ: Այս իմաստով առանձնանում են Լ. Խեչոյանի և Հ. Վարդումյանի ստեղծագործությունները:

Բ. գ. թ. Լ. Վարդանյանի *զեկուցման վերնագիրն էր՝ «Արցախյան պատերազմի՝ Գրիգոր Բաբայանի ընկալումը»: Ընթերցող լայն հանրությանն անհայտ հեղինակն իր գրառումներում մշտապես փորձում էր հաշտեցնել գրողին ու լրագրողին: Գր. Բաբայանի ընկալմամբ՝ պատերազմը հերոսամարտ էր, այն էլ՝ պարտադրված: Թշնամին չի փոխվում, ժամանակակից պատերազմներն են ավելի ստոր ձևեր հորինում: Կա մի ուրիշ՝ ավելի բարդ պատերազմ, որն ընթանում է մարդու ներսում:*

«Արցախյան գոյամարտի արտացոլումը Զորի Բալայանի ստեղծագործություններում» զեկուցման մեջ Մ. Մկրտչյանն *անդրադարձավ գրողի՝ Ղարաբաղյան ոգու բացառիկության գաղտնիքի մեկնաբանությանը, գոյատևման ազգապահպանման ծրագրին:*

Գիտաժողովն ավարտվեց բուռն քննարկումներով: Հնչած կարծիքները, զեկուցումներն իրենց հետաքրքիր բովանդակությամբ ու առաջ քաշած հարցադրումներով մեկ անգամ ևս հավաստեցին, որ Արցախյան հերոսամարտին նվիրված գրականությունը դեռ կարոտ է հանգամանալից վերլուծության, և այս առումով անելիքները շատ են:

Գիտաժողովից հետո տեղի ունեցավ բ. գ. թ. Ս. Ավետիսյանի «Գիր և ինքնություն» գրքի շնորհանդեսը: Գիրքն ամփոփում է հեղինակի՝ Անկախության տարիներին գրած հոդվածները, որոնց առանցքային խնդիրը հայ ինքնությունն է, գոյավորման սկիզբը, տեսակի կենսափիլիսոփայության գաղտնիքը:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ